# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի հունվարի 14-ին կնքված N ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի փետրվարի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում հաստատվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը համաձայն Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:
2. Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ում և Հավելված 2-ով սահմանված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV), շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. 79411210/2:
3. Սահմանվել է, որ համաձայնագրի (Պայմանագրի) պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագրի կնքելը Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիմաան վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշառված լինելու դեպքում:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, իսկ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գնման առարկայի ձեռքբերման պահանջը չի դադարել և ձեռքբերման համար ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որոնց արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն Պայմանագրում, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.16 կետերով սահմանված պահանջները, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները:

***Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե***